Երևանի քաղաքապետարանի
«Կանաչապատում և շրջակա միջավայրի
պահպանություն» ՀՈԱԿ
17 հունիս 2024 թվական

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) կողմից ձևավորված մասնագիտական հանձնաժողովի ներքոստորագրյալներս ի պատասխան Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի ղեկավար՝ Ս. Մուրադյանից հունիսի 11-ին Կազմակերպությանն հասցեագրված առցանց գրության, հայտնում եմ, որ հանձնաժողովը ս/թ հունիսի 17-ին ուսումնասիրություն է իրականացրել Սևան համայնքի մոտ 2,5 կմ երկարություն ունեցող Նաիրյան փողոցում գտնվող գերհասուն, կենսունակության ավարտին մոտ, սաղարթ չունեցող բալզամային բարդիները և եկել է հետևյալ եզրակացության.

1. Բարձր ալերգիկ ֆոն ունեցող բալզամային բարդիները ներկայումս գտնվում են կենսունակության ավարտին մոտ և ենթակա են հատման և փոխարինման:
2. Բալզամային բարդիները գերակշիռ մասը ունեն բնափայտի փտածություն, թեքվածություն, փչակներ, շատերի վրա առկա են սնկեր (կից ներկայացվում են լուսանկարներ՝ 10 հատ):
3. Բալզամային բարդիների գերակշռող մասը ներկայումս վթարային են և ունեն տապալման մեծ վտանգ:
4. Նշենք, որ բալզամային բարդիները վերջին 40 տարիներին, որպես ալերգիկ և հրդեհավտանգ տեսակներ ներքաղաքային կանաչ տնկարկներից աստիճանաբար դուրս են մղվում:
5. Հանձնաժողովը առաջարկում է նշված փողոցում առկա բալզամային բարդիները հատված առ հատված՝ փուլային տարբերակով, հատել և փոխարինել Սևան համայնքի բնակլիմայական պայմաններին հարմարված հետևյալ ցեղատեսակի ծառերով՝ ձիակասկ, թխկի, կաղնի, ակացիա, արոսենի:

Հանձնաժողովի նախագահ՝

«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի
զարգացման գծով տնօրենի տեղակալ Ա. Խալաթյան

Հանձնաժողովի անդամներ՝

«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի
գլխավոր դենդրոլոգ,կ.գ.թ. դոցենտ Ա. Գրիգորյան

«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի
փորձագետ, կ.գ.թ. դոցենտ Հ. Խուրշուդյան

«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի ագրոնոմիական
բաժնի պետի պ/կ,
բույսերի պաշտպան, մագիստրոս Ժ.Պողոսյան